# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին

Հայաստանի Հանրապետությունը և Մոլդովայի Հանրապետությունը,

ղեկավարվելով երկու Պայմանավորվող պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու ձգտումով, եկամուտների ու գույքի կրկնակի հարկումը վերացնելու, հարկերի վճարումից խուսափելը կանխելու և հարկային խտրականություն թույլ չտալու նպատակով որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1
### Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

### Հոդված 2
### Հարկեր, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ նրա տեղական իշխանության մարմնի կողմից եկամուտներից և գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից ու գույքից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր արժեքից կամ դրանց առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, այդ թվում շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամուտներից, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարից գանձվող հարկերը, ինչպես նաև գույքի հավելաճից առաջացող եկամուտներից գանձվող հարկերը:

3. Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է, մասնավորապես, հետևյալ հարկերի վրա՝

ա) Հայաստանում՝
- i) շահութահարկ,
- ii) եկամտահարկ,
- iii) գույքահարկ,

բ) Մոլդովայում՝
- i) եկամտահարկ,
- ii) հարկ անշարժ գույքից:

4. Սույն Համաձայնագիրը կկիրառվի ցանկացած նույնական կամ ըստ էության նմանատիպ հարկերի նկատմամբ, որոնք կգանձվեն Պայմանավորվող պետություններից մեկի կողմից՝ ի լրումն կամ այդ Պայմանավորվող պետությունում գործող հարկերի փոխարեն՝ սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կիրազեկեն միմյանց իրենց հարկային օրենսդրություններում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

## Հոդված 3
## Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան չի բխում ենթատեքստից.

ա) «մի Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» արտահայտությունները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Մոլդովա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելու դեպքում նշանակում է Հայաստանի տարածք, ներառյալ ներքին ջրերը և օդային տարածությունը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է բնական պաշարների հետախուզման և շահագործման ինքնիշխան իրավունքներ՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան,

գ) «Մոլդովա» տերմինը նշանակում է Մոլդովայի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելու դեպքում նշանակում է Մոլդովայի տարածք, ներառյալ ներքին ջրերը և օդային տարածությունը, որոնց նկատմամբ Մոլդովայի Հանրապետությունը իրականացնում է բնական պաշարների հետախուզման և շահագործման ինքնիշխան իրավունքներ՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան,

դ) «մի Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» արտահայտությունները նշանակում են, համապատասխանաբար, մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ե) «անձ» տերմինը նշանակում է ֆիզիկական անձ, ընկերություն կամ անձանց ցանկացած այլ միավորում,

զ) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած կորպորատիվ միավորում կամ ցանկացած այլ միավորում, որը հարկման նպատակների համար դիտվում է որպես կորպորատիվ,

է) «միջազգային փոխադրում» արտահայտությունը նշանակում է ծովային, գետային կամ օդային նավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ երբ ծովային, գետային կամ օդային նավը, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող կետերի միջև,

ը) «իրավասու մարմին» արտահայտությունը նշանակում է.

i) Հայաստանի առնչությամբ՝ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը և Պետական եկամուտների նախարարը կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչները,

ii) Մոլդովայի առնչությամբ՝ Ֆինանսների նախարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը,

ը) «ազգային անձ» արտահայտությունը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենսդրությամբ այդպիսի կարգավիճակ ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագիրը կիրառվելիս Համաձայնագրում չսահմանված ցանկացած տերմին ունի այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ Պայմանավորվող պետության օրենսդրությամբ այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը, եթե այլ բան ենթատեքստից չի հետևում:

## Հոդված 4
## Ռեզիդենտ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» արտահայտությունը նշանակում է՝ անձ, որն այդ Պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման բնակության վայրի, մշտական տեղակայման, գրանցման վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա:

2. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի մշտական կացարան, եթե նա երկու Պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի մշտական կացարան, համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է կամ եթե և ոչ մեկում սովորաբար չի բնակվում, ապա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է հանդիսանում,

դ) եթե նա հանդիսանում է երկու Պետությունների քաղաքացի կամ եթե չի հանդիսանում դրանցից և ոչ մեկի քաղաքացի, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները տվյալ հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համաձայն, ֆիզիկական չհանդիսացող անձը համարվում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի օրենսդրությամբ ստացել է իր կարգավիճակը որպես այդպիսին:

## Հոդված 5
## Մշտական հաստատություն (ներկայացուցչություն)

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն (ներկայացուցչություն)» արտահայտությունը նշանակում է՝ գործունեության մշտական վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն (ներկայացուցչություն)» արտահայտությունը, մասնավորապես, ներառում է.

ա) ղեկավարման վայր,

բ) մասնաճյուղ,

գ) գրասենյակ,

դ) ֆաբրիկա,

ե) արհեստանոց, և

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետախուզման, մշակման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը, շինարարական, մոնտաժային, հավաքման օբյեկտը, ինչպես նաև նշված օբյեկտների հետ կապված հսկողական գործունեությունը կազմում են մշտական հաստատություն (ներկայացուցչություն) միայն այն դեպքում, եթե այդպիսի հրապարակի, օբյեկտի կամ գործունեության տևողությունը գերազանցում է տասներկու ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն (ներկայացուցչություն)» արտահայտությունը չի դիտարկվում որպես ներառող.

ա) կառույցների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահպանման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակվելու նպատակով,

դ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար ապրանքներ կամ արտադրանք գնելու կամ տեղեկություններ հավաքելու նպատակով,

ե) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակով,

զ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում

գործունեության մշտական վայրի ընդհանուր գործունեությունը ունի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ եթե ձեռնարկության անունից գործող անձը անկախ կարգավիճակով գործակալ չէ, որի մասին շարադրված է սույն հոդվածի 6-րդ կետում, գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար մյուս Պայմանավորվող պետությունում օգտագործում է ձեռնարկության անունից կոնտրակտներ կնքելու իրավասությունը, ապա այդ ձեռնարկությունը դիտարկվում է որպես այդ Պետությունում մշտական հաստատություն (ներկայացուցչություն) ունեցող՝ ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է ձեռնարկության համար, բացառությամբ եթե այդ անձի գործունեությունը սահմանափակվում է սույն հոդվածի 4-րդ կետում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, չի վերածում այդ գործունեության մշտական վայրը մշտական հաստատության (ներկայացուցչության)՝ համաձայն այդ կետի դրույթների:

6. Ձեռնարկությունը չի դիտվում որպես Պայմանավորվող պետությու-նում մշտական հաստատություն (ներկայացուցչություն) ունեցող միայն, եթե նա այդ մյուս Պետությունում ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է բրոքերի, կոմիսիոների կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործեն իրենց սովորական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ որն այդ մյուս Պետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն (մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից մեկը չի վերածում մյուսի մշտական հաստատության (ներկայացուցչության):

### Հոդված 6
### Եկամուտներ անշարժ գույքից

1. Այն եկամուտները, որոնք մի Պայմանավորվող պետության ռեզիդենտն ստանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից (ներառյալ գյուղացիական և անտառային տնտեսություններից ստացվող եկամուտը), կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» արտահայտությունը պետք է ունենա այն նշանակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Ծովային, գետային կամ օդային նավերը, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտվում:

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից և անկախ անհատական ծառայություն-ներ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

## Հոդված 7
## Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է այդ կերպ, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, սակայն միայն այն մասով, որը վերաբերում է այդ մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը):

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, եթե մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդպիսի մշտական հաստատությանն (ներկայացուցչությանն) է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ այդպիսի կամ համանման պայմաններում այդպիսի կամ համանման գործունեությամբ զբաղված՝ առանձնացված և առանձին ձեռնար-կություն լինելու և ձեռնարկությունից (ում մշտական հաստատությունը (ներկա-յացուցչությունը) համարվում է) միանգամայն անկախ գործելու դեպքում:

3. Մշտական հաստատության (ներկայացուցչության) շահույթը որոշելիս թույլատրվում է այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) նպատակների համար կատարված ծախսերի նվազեցում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն բանից՝ կատարված են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը), թե նրա սահմաններից դուրս: Բոլոր դեպքերում այդպիսի ծախքերը չպետք է ներառեն գումարներ, եթե այդպիսիները կան, որոնք վճարվում են (այլ կերպ, քան իրականում տեղի ունեցած ծախսերի հատուցում) մշտական հաստատության (ներկայացուցչության) կողմից ձեռնարկությանը կամ նրա ցանկացած ստորաբաժանմանը՝ պատենտներից կամ ուրիշ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիի, հոնորարների կամ այլ նմանատիպ վճարումների կամ մատուցած ծառայությունների կամ կառավարման համար միջնորդավճարների կամ մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) նրանց տրամադրած փոխառության համար տոկոսների (բացառությամբ բանկերի) ձևով:

4. Եթե մի Պայմանավորվող պետության օրենսդրությամբ մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) վերաբերող շահույթը կարող է որոշվել ձեռնարկության և նրա տարբեր ստորաբաժանումների միջև ընդհանուր շահույթի գումարի համաչափ բաշխման հիման վրա, ապա սույն հոդվածի 2-րդ կետի

դրույթները այդ Պայմանավորվող պետության համար խոչընդոտ չեն հանդիսանա հաշվարկել հարկվող շահույթն այդպիսի բաշխման միջոցով:

5. Ոչ մի շահույթ չի հաշվեգրվում մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) այդ մշտական հաստատության (ներկայացուցչության) կողմից ձեռնարկության համար միայն ապրանքներ կամ արտադրանք գնելու հիման վրա:

6. Սույն հոդվածի նախորդ կետերի դրույթների կիրառման նպատակների համար մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) հաշվեգրվող շահույթը ամեն տարի կորոշվի միևնույն եղանակով, եթե միայն դրա փոփոխման համար չլինի բավարար ու ծանրակշիռ պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է եկամուտների ձևեր, որոնք առանձին դիտվում են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն շոշափում այդ հոդվածների դրույթները:

## Հոդված 8
## Միջազգային տրանսպորտ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի նպատակների համար միջազգային փոխադրումներում ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից շահույթը ներառում է.

ա) եկամուտ ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների վարձակալությունից, և

բ) շահույթ ապրանքների և արտադրանքի փոխադրումների համար օգտագործվող բեռնարկղերի (ներառյալ տրեյլերների ու բեռնարկղերի փոխադրման համար ուղեկցող սարքավորումները) օգտագործումից, պահումից կամ վարձակալությունից,

որտեղ, կախված իրավիճակից, այդպիսի վարձակալությունը կամ այդպիսի օգտագործումը, պահումը կամ վարձակալությունը հանդիսանում են միջազգային փոխադրումներում ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործելու նկատմամբ երկրորդական:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև այն շահույթի նկատմամբ, որը Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստանում է պուլում, համատեղ ձեռնարկությունում կամ նավերի և փոխադրամիջոցների շահագործման համատեղ կազմակերպությունում մասնակցելուց, բայց միայն շահույթի այն մասի նկատմամբ, որը վերագրվում է համատեղ գործունեությունում նրա ունեցած մասնաբաժնին:

## Հոդված 9
## Ասոցացված (զուգորդված) ձեռնարկություններ

1. Այն դեպքում, երբ.

ա) մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են և մի Պայմանավարվող պետության ձեռնարկության, և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև, նրանց առևտրային և ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվեգրվել նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է Պայմանավորվող պետության կողմից ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Երբ մի Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության հարկվող շահույթի կազմում մտցնում է մի շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունն այդ մյուս Պետությունում հարկվել է, և այդ կերպ մտցված շահույթն իրենից ներկայացնում է մի շահույթ, որը կհաշվեգրվեր առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ հարաբերություններ, ապա այդ մյուս Պետություն կատարում է այնտեղ հաշվեգրված այդ շահույթի հարկի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

## Հոդված 10
## Շահաբաժիններ

1. Մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժինները վճարող ընկերությունը, և այդ Պետության օրենսդրությանը համապատասխան, բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, ապա գանձվող հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերն ընկերությունն է (ընկերակցությունից բացի), որը տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադիր հիմնադրամի (կապիտալի) առնվազն 25 տոկոսը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ բոլոր մնացած դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

Այս կետը չի շոշափում ընկերության հարկումն այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած բաժնետոմսից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկման, ինչպես որ բաժնետոմսերից ստացվող եկամուտը՝ այն Պետության հարկային օրենսդրությանը համապատասխան, որի ռեզիդենտն է հանդիսանում շահույթի բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, և մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրականում վերաբերում են նման մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) կամ մշտական բազային: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտներ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը կարող է հարկումից լրիվ ազատել այդ ընկերության կողմից վճարվող շահաբաժինները, բացառությամբ եթե այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրականում վերաբերում է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) կամ մշտական բազային, և չի կարող հարկել ընկերության շահույթը, եթե նույնիսկ շահաբաժինները վճարվում են, կամ չբաշխված շահույթը լրիվ կամ մասնակիորեն կազմված է այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

**Հոդված 11**
**Տոկոսներ**

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են, այդ Պետության օրենսդրության

համաձայն. բայց եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, ապա գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ հիպոթեքային ապահովումից և պարտապանի շահույթներին մասնակցելու իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և փոխառության տոմսերից կամ պարտատոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերին, փոխառության տոմսերին կամ պարտատոմսերին վերաբերող պարգևավճարներն ու շահումները: Սույն հոդվածի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց գանձվող տուգանքները որպես տոկոսներ չեն դիտվում:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, տոկոսների առաջացման աղբյուր հանդիսացող մյուս Պայմանավորվող պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, և պարտապահանջը, որի հիման վրա տոկոսները վճարվում են, իրականում վերաբերում է նման մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) կամ մշտական բազային: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

5. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքն այդ Պետությունն է, նրա վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, մշտական հաստատություն (ներկայացուցչություն) կամ մշտական բազա ունի Պայմանավորվող պետությունում, որի առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կատարում է մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ մշտական բազան, ապա համարվում է, որ նման տոկոսներն առաջանում են այն Պետությունում, որտեղ գտնվում են մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով վճարման համար հիմք ծառայող՝ պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասը նախորդի պես հարկվում է Պայմանավորվող

պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համաձայն՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

**Հոդված 12**
**Ռոյալթի**

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է, համաձայն այդ Պետության օրենսդրության. բայց եթե ստացողը ռոյալթիի փաստացի սեփականատերն է, ապա նման ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 10 տոկոսը:
Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ փոխհատուցման տեսքով ստացվող ցանկացած տեսակի վճարում գրականության, արվեստի կամ գիտության ստեղծագործությունների (ներառյալ կինոֆիլմերը, ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների համար ցանկացած ֆիլմը կամ ժապավենը), ցանկացած պատենտի, ապրանքանշանի, դիզայնի կամ մոդելի, պլանի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի տրամադրման համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձի վերաբերյալ տեղեկության («նոու-հաու») համար:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում ռոյալթիի աղբյուր հանդիսացող մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի նկատմամբ վճարվում է ռոյալթին, իրականում կապված է այդ մշտական հաստատության (ներկայացուցչության) կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

5. Համարվում է, որ ռոյալթին առաջանում է Պայմանավորվող պետությունում, եթե ռոյալթի վճարող է հանդիսանում ինքը՝ Պետությունը, նրա վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե այդպիսի եկամուտներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, այդ Պետությունում ունի մշտական հաստատություն (ներկայացուցչություն) կամ մշտական բազա, որի կապակցությամբ այդպիսի եկամուտներ վճարելու պարտավորություն է առաջացել, և վճարման ծախսերը կրում են այդ մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ մշտական բազան, ապա

համարվում է, որ այդ եկամուտները առաջանում են այն Պետությունում, որտեղ գտնվում են մշտական հաստատությունը (ներկայացուցչու-թյունը) կամ մշտական բազան:

6. Եթե վճարողի և ռոյալթիի փաստացի սեփականատիրոջ միջև կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով վճարման համար հիմք ծառայող՝ օգտագործմանը, իրավունքին կամ տեղեկությանը վերաբերող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը համաձայնեցված կլիներ վճարողի և ռոյալթիի փաստացի սեփականատիրոջ միջև այդպիսի հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասը նախորդի պես հարկվում է Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

## Հոդված 13
## Եկամուտներ գույքի օտարումից

1. Այն եկամուտները, որոնք մի Պայմանավորվող պետության ռեզիդենտն ստանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի օտարումից, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության (ներկայացուցչության) առևտրային գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտին մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անձնական ծառայություններ մատուցելու նպատակների համար մշտական բազային վերաբերող շարժական գույքի օտարումից եկամուտները, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի մշտական բազայի օտարումից եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների կամ այդպիսի ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից եկամուտները հարկվում են միայն այդ Պայմանավորվող պետությունում:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գույքից տարբերվող ցանկացած գույքի օտարումից եկամուտները հարկվում են միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում գույք օտարող անձը:

## Հոդված 14
## Անկախ անձնական ծառայություններ

1. Այն եկամուտները, որոնք մի Պայմանավորվող պետության ռեզիդենտն ստանում է մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից, հարկվում են միայն այդ Պետությունում, բացառությամբ, երբ նա այդ գործունեությունն իրականացնելու համար մյուս Պայմանավորվող պետությունում ունի կանոնավոր հասանելի մշտական բազա: Եթե նա ունի այդպիսի մշտական բազա, ապա եկամուտները կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, բայց միայն այդ մշտական բազային վերաբերող մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» արտահայտությունը ներառում է, մասնավորապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, գեղարվեստական, կրթական կամ դասախոսական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

## Հոդված 15
## Կախյալ անձնական ծառայություններ

1. Հաշվի առնելով սույն Համաձայնագրի 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթները՝ աշխատավարձը և նմանատիպ այլ վարձատրությունները, որոնք մի Պայմանավորվող պետության ռեզիդենտն ստանում է վարձու աշխատանքի դիմաց, հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվի մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ կապակցությամբ ստացված վարձատրությունները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին կետի դրույթներից՝ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց հարկվում է միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետում կամ ժամկետներում, և

բ) վարձատրությունը կատարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող վարձողի կողմից կամ վարձողի անունից, և

գ) վարձատրություն կատարելու ծախսերը չեն կրում մյուս Պետությունում վարձողի ունեցած մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ մշտական բազան:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային կամ օդային նավում, ավտոմոբիլային կամ

երկաքուղային փոխադրամիջոցում իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

**Հոդված 16**
**Տնօրենների հոնորարները**

Տնօրենների հոնորարները և այլ նմանատիպ վճարումները, որոնք մի Պայմանավորվող պետության ռեզիդենտը ստանում է որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

**Հոդված 17**
**Արվեստի բնագավառի աշխատողներ և մարզիկներ**

1. Անկախ սույն Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից՝ այն եկամուտը, որը մի Պայմանավորվող պետության ռեզիդենտն ստանում է որպես արվեստի բնագավառի աշխատող, ինչպես թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը կամ, որպես մարզիկ, մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող իր անձնական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի բնագավառի աշխատողի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացվող անձնական գործունեության եկամուտը հաշվեգրվում է ոչ թե բուն արվեստի բնագավառի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա, անկախ սույն Համաձայնագրի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ արվեստի բնագավառի աշխատողը կամ մարզիկն իրականացնում է գործունեությունը:

**Հոդված 18**
**Կենսաթոշակներ**

Հաշվի առնելով սույն Համաձայնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները և սոցիալական ապահովագրության այլ վճարումները՝ կապված նրա նախկին վարձու աշխատանքի հետ, հարկվում են միայն այդ Պետությունում:

**Հոդված 19**
**Պետական ծառայություն**

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կամ նրանց ստեղծած հիմնադրամների կողմից ցանկացած ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, ռոճիկը կամ այլ նմանատիպ վարձատրությունը, կենսաթոշակից բացի, այդ Պետությանը կամ նրա վարչատարածքային ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցված ծառայությունների դիմաց, հարկվում է միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը կամ այլ նմանատիպ վարձատրությունը հարկվում են միայն մյուս Պայմանավորվող պետությունում,

եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) այդ Պետության քաղաքացին է, կամ

ii) այդ Պետության ռեզիդենտ չի դարձել սույն ծառայությունները մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կամ նրանց ստեղծած հիմնադրամների կողմից ցանկացած ֆիզիկական անձին վճարված ցանկացած կենսաթոշակ՝ այդ Պետությանը կամ նրա վարչատարածքային ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց, հարկվում է միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը հարկվում է մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը համարվում է այդ Պետության ռեզիդենտը և քաղաքացին:

3. 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են ռոճիկի, աշխատավարձի և այլ նմանատիպ վարձատրությունների, ինչպես նաև ծառայության համար կենսաթոշակների նկատմամբ, որոնք իրականացվում են Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության կապակցությամբ:

## Հոդված 20
## Ուսանողներ

Մինչև անմիջականորեն մի Պայմանավորվող պետություն գալը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող կամ հանդիսացած և առաջինը հիշատակված Պետությունում բացառապես ուսում կամ կրթություն ստանալու նպատակով գտնվող ուսանողին, պրակտիկանտին կամ ստաժյորին հատկացվող վճարումները՝ նախատեսված ապրելու, ուսանելու կամ կրթություն ստանալու համար, չեն հարկվում առաջինը հիշատակված Պետությունում, եթե այդ վճարումների աղբյուրները գտնվում են այդ Պետության սահմաններից դուրս:

## Հոդված 21
## Պրոֆեսորներ և ուսուցիչներ

1. Մինչև անմիջականորեն մի Պայմանավորվող պետություն գալը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող կամ հանդիսացած և առաջինը հիշատակված Պետությունում Պայմանավորվող պետության կառավարության կողմից հավատարմագրված ուսումնական հաստատության հրավերով բացառապես դասավանդելու և/կամ հետազոտությունների նպատակով գտնվող պրոֆեսորներին և ուսուցիչներին հատկացվող վճարումները չեն հարկվում առաջինը հիշատակված Պետությունում՝ պայմանով, որ այդ պրոֆեսորները և ուսուցիչները գտնվում են այդ Պետությունում այդ Պետություն կատարած առաջին այցելության ամսաթվից սկսած՝ 2 տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում հետազոտություններից ստացված այն եկամուտների նկատմամբ, որոնք

կատարվել են՝ ելնելով որևէ առանձին անձի կամ անձանց մասնավոր շահից, այլ ոչ թե հասարակության շահերից:

## Հոդված 22
## Այլ եկամուտներ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտների՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված տեսակները, անկախ նրանց առաջացման աղբյուրից, հարկվում են միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամուտներից տարբեր այլ եկամուտների նկատմամբ, եթե նման եկամուտներ ստացողը համարվում է մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ և մյուս Պայմանավորվող պետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով կամ այդ մյուս Պետությունում մատուցում է անկախ անձնական ծառայություններ այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի հետ կապված ստացվել է եկամուտը, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

3. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող պետությունում առաջացած եկամտի տեսակները կարող են հարկվել նաև այդ մյուս Պետությունում:

## Հոդված 23
## Գույք

1. Մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի սեփականություն համարվող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքով ներկայացված գույքը, որի մասին նշվում է սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության (ներկայացուցչության) առևտրային գույքի մաս կազմող՝ շարժական գույքով ներկայացված գույքը կամ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտին մյուս Պայմանավորվող պետությունում, անկախ անձնական ծառայություններ մատուցելու նպատակով, հասանելի մշտական բազայի հետ կապված՝ շարժական գույքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող պետության ռեզիդենտի սեփականություն հանդիսացող, միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային կամ օդային նավերով, ավտոմոբիլային կամ երկաթուղային

փոխադրամիջոցներով ներկայացված կամ այդպիսի ծովային, գետային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործման հետ կապված շարժական գույքով ներկայացված գույքը հարկվում է միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը հարկվում են միայն այդ Պետությունում:

### Հոդված 24
### Կրկնակի հարկման վերացումը

1. Եթե մի Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, առաջինը հիշատակված Պետությունը թույլ կտա.

ա) այդ ռեզիդենտի եկամտահարկից նվազեցնել այդ մյուս Պետությունում վճարված եկամտահարկին հավասար գումար,

բ) այդ ռեզիդենտի գույքահարկից նվազեցնել այդ մյուս Պետությունում վճարված գույքահարկին հավասար գումար:

Այդպիսի նվազեցումները երկու դեպքերում էլ, կախված հանգամանքներից, չպետք է գերազանցեն եկամտահարկի կամ գույքահարկի՝ մինչև այդ մյուս Պետությունում հարկման ենթակա եկամտին կամ գույքին վերաբերող նվազեցման տրամադրումը, հաշվարկված մասը:

2. Եթե, սույն Համաձայնագրի որևէ դրույթին համապատասխան, Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտը կամ գույքը այդ Պետությունում ազատված է հարկից, ապա այդ Պետությունը, այդուհանդերձ, կարող է այդ ռեզիդենտի գույքի կամ եկամտի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը որոշելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

### Հոդված 25
### Անխտրականություն

1. Մի Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկի որևէ հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, որն այլ կամ ավելի ծանր է, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք միևնույն հանգամանքների դեպքում, մասնավորապես, ռեզիդենտության նկատմամբ:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն որևէ հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, որոնք այլ կամ ավելի ծանր են, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են այդ Պետությունների ազգային անձինք միևնույն հանգամանքների դեպքում:

3. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության (ներկայացուցչության) հարկումը չպետք է նվազ բարենպաստ լինի այդ մյուս

Պայմանավորվող պետությունում, քան այդ մյուս Պետությունում նմանատիպ գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես մի Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին շնորհելու որևէ հարկային անհատական արտոնություն, նվազեցում և զեղչ, որոնք նա տրամադրում է իր սեփական ռեզիդենտներին նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան համգամանքների հիման վրա:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 6-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, տոկոսները, ռոյալթին կամ այլ վճարումները կատարած մի Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին նման ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով, պետք է նվազեցվեն այն նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես մի Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին՝ այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով, ենթակա է նվազեցման այն նույն պայմաններով, ինչ որ պարտքը առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

5. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալը լրիվ կամ մասնակիորեն պատկանում է կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը հիշատակված Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորությունն են, որոնց ենթարկվում են առաջինը հիշատակված Պետության՝ այլ նմանատիպ ձեռնարկությունները:

## Հոդված 26
## Փոխհամաձայնեցման ընթացակարգը

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ազգային օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, քննարկման համար իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմիններին, որի ռեզիդենտ ինքը հանդիսանում է, կամ, եթե դեպքը վերաբերում է սույն Համաձայնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պետության իրավասու մարմիններին, որի ազգային անձն է ինքը: Դիմումը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողությունների մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմումը համարի հիմնավորված, կամ եթե նա ի վիճակի չլինի հանգելու գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ նպատակ ունենալով վերացնել սույն Համաձայնագրին չհամապատասխանող կրկնակի հարկումը: Ցանկացած ձեռք բերված պայմանավորվածություն պետք է

կատարվի անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությունում նախատեսված որևէ ժամանակային սահմանափակման:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխհամաձայնությամբ կձգտեն լուծել ցանկացած դժվարություն կամ կասկած, որը կառաջանա սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապի մեջ մտնել միմյանց հետ՝ նախորդ կետերի ըմբռնման մեջ համաձայնության հասնելու նպատակով:

**Հոդված 27**
**Տեղեկությունների փոխանակում**

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի կամ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար անհրաժեշտ տեղեկություններ կփոխանակեն այն հարկերի վերաբերյալ, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը՝ այն չափով, որքանով հարկումը չի հակասում Համաձայնագրին: Տեղեկությունների փոխանակումը սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով չի սահմանափակվում: Պայմանավորվող պետության ստացած ցանկացած տեղեկություն կհամարվի կոնֆիդենցիալ և կհաղորդվի միայն այն անձանց կամ իշխանություններին (ներառյալ դատարանները և կառավարման մարմինները), որոնք զբաղված են սույն Համաձայնագրով ընդգրկվող հարկերը գնահատելով կամ գանձումով, բռնագանձումով կամ դատական հետապնդումով կամ բողոքարկումների քննումով: Անձինք կամ մարմինները տեղեկությունը կօգտագործեն միայն նշված նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել այդ տեղեկությունը դռնբաց դատական նիստերի ընթացքում և իրավարարական որոշումներ ընդունելիս:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետություններին պարտավորեցնող.

ա) անցկացնելու Պայմանավորվող պետություններից մեկի օրենսդրությանը կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություն, որը չի կարելի ստանալ Պայմանավորվող պետություններից մեկի օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրական, առևտրային, արդյունաբերական կամ մասնագիտական գաղտնիք, առևտրական գործընթաց կամ տեղեկություն, որը կհակասի պետական շահերին:

## Հոդված 28
## Դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի շոշափում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների՝ միջազգային իրավունքի ընդհանուր նորմերով կամ հատուկ համաձայնագրերի հիման վրա սահմանված հարկային արտոնությունները:

## Հոդված 29
## Ուժի մեջ մտնելը

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով կտեղեկացնեն միմյանց սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված ծանուցագրերից վերջինի ստացման օրը, և նրա դրույթները կկիրառվեն.

ա) աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից հետո վճարվող գումարներից,

բ) եկամուտներից և գույքից գանձվող այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից սկսվող յուրաքանչյուր հարկային տարվա համար:

## Հոդված 30
## Գործողության դադարեցումը

Սույն Համաձայնագիրը մնում է ուժի մեջ մինչև նրա գործողության դադարեցումը Պայմանավորվող պետություններից մեկի կողմից: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը ուժի մեջ մտնելու պահից հինգ տարի անցնելուց հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով գործողության դադարեցման մասին գրավոր ծանուցագիր հանձնելու միջոցով:

Այդ դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է գործողությունը.

ա) աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ՝ գործողությունը դադարեցնելու ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից հետո վճարվող գումարների նկատմամբ,

բ) եկամուտներից և գույքից գանձվող այլ հարկերի առնչությամբ՝գործողությունը դադարեցնելու ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող տարվա հունվարի մեկից սկսվող յուրաքանչյուր հարկային տարվա համար:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Քիշնև քաղաքում 2002 թվականի հոկտեմբերի 6 -ին, երկու բնօրինակով՝ հայերեն, մոլդովերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում որպես հիմք ընդունվում է ռուսերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության կողմից՝**

**Մոլդովայի Հանրապետության կողմից՝**